

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

10.10.2019

Փոխըմբռնման համաձայնագիր է ստորագրվել Աստանայի ֆինանսական ծառայությունների մարմնի և Հայաստանի կենտրոնական բանկի միջև

Աստանայի ֆինանսական ծառայությունների մարմինը Փոխըմբռնման Համաձայնագիր է ստորագրել Հայաստանի կենտրոնական բանկի հետ: Ստորագրման արարողությունը տեղի ունեցել էր Երևան քաղաքում:

Ըստ Համաձայնագրի, կողմերը համագործակցելու են բանկային ոլորտի, ապահովագրական և կապիտալ շուկաների վերահսկման և կարգավորման ուղղությամբ, մասնավորապես՝ փողերի լվացման դեմ, վերահսկման, լիազորման, ֆինանսների վերականգնման ուղղությամբ:

Համաձայնագիրը ստորագրվել է ՀՀ ԿԲ նախագահի տեղակալ պարոն Վախթանգ Աբրահամյանի և ԱՖԾՄ գլխավոր տնօրենի Ժամանակավոր պաշտոնակատար պարոն Մուխտար Բուբենի կողմից: Կողմերը համաձայնվել են զարգացնել համագործակցությունը միջսահմանային կառույցներում իրենց համապատասխան իրավասությունների ներքո, նպաստել վերահսկողական տեղեկատվության փոխանակմանը և ապահովել փոխգործակցությունը ԱՖԾՄ և ՀՀ ԿԲ միջև:

Համաձայնագիրը սահմանում է փոխգործակցության և վերահսկողական տեղեկատվության փոխանակման անհրաժեշտ պայմանները ԱՖԾՄ և ՀՀ ԿԲ միջև:

Վախթանգ Աբրահամյանը ողջունել է Համաձայնագրի ստորագրումը, նշելով, – «Ստորագրելով սույն համաձայնագիրը, մենք կարևոր քայլ կատարեցինք մեր երկու հաստատությունների միջև հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ: ՀՀ ԿԲ ակնկալում է արդյունավետ համագործակցություն և փոխգործակցություն ֆինանսական վերահսկողության և կարգավորման ոլորտում, որտեղ ԱՖԾՄ և ՀՀ ԿԲ ունեն մեծ փորձ, որով կարող են կիսվել»:

Մուխտար Բուբենն ասել է, – «Մենք ուրախ ենք համաձայնագիրը ստորագրելու կապակցությամբ, ինչը թույլ կտա ընդլայնել ԱՖՄԾ և ՀՀ ԿԲ գործակցությունը միասնական շահերի առումով, զարգացնել տեղեկատվության փոխանակումը և վերահսկումը բանկային, ապահովագրական և կապիտալ շուկաների ոլորտներում՝ մեր երկու կառույցների իրավասության շրջանակներում»:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

հեռ/ֆաքս. (010) 56 37 61

էլ-փոստ. mcba@cba.am

www.cba.am